

# Հայ ժողովրդի պատմության Ժամանակագրություն

**1874 ապրիլ 22** Կ. Պոլսում մահացավ «Մեղու» թերթի խմբագիր, արևմտահայ հեղափոխական-դեմոկրատ Հարություն Ավաճյանը: (Ծնվ. 1831թ.-ին):

**հունիս 20** Մեծ Ղարաքիլիսայում կազմակերպվեց «Հայրենիքի սիրո գրասենյակ» կազմակերպությունը Համբարձուն Բալասանյանի ղեկավարությամբ:

**հուլիս 19** Ցարական կառավարությունը լրացուցիչ կանոններ հրատարակեց հայկական դպրոցների համար, ըստ որոնց հայկական դպրոցները մնում են հայ եկեղեցու տնօրինության տակ:

**սեպտեմբեր 23** Բաքվում բացվեց Հռիփսիմյան օրիորդաց դպրոցը:

**սեպտեմբեր 28** Էջմիածնում բացվեց Քևորգյան ճեմարանը:

**հոկտեմբեր 7** Ծնվեց քաղաքագետ Վինսթոն Չրչիլը, որը 1924 թ.-ին հայերի ցեղասպանությունը բնութագրեց ինչպես ամենախոշոր ռասսայական բնաջնջում: (Վախճ. 1965թ.-ին):

**1874 նոյեմբեր 5** Բացվեց Երևանի նահանգի Արագոյանի ջրանցքը:

**1875 հոկտեմբեր 30** Ալեքսանդրապոլում ծնվեց հայ գրականության դասական բանաստեղծ Ավետիք Իսահակյանը: (Վախճ. 1957թ.-ին):

**1876 մարտ 20** Ծնվեց հայ լեզվաբան, բանաստեղծ Հրաչյա Աճառյանը: (Վախճ. 1953թ.-ին):

**ապրիլ 15** Կ. Պոլսում հիմնվեց Արարատյան ընկերությունը:

**օգոստոս 18** Ալեքսանդրապոլում ծնվեց հայ բանաստեղծուհի Շուշանիկ Կուրդիյանը: (Վախճ. 1927 թ.-ին):

**նոյեմբեր 29** Կ. Պոլիսում վախճանվեց բժիշկ, լեզվագետ, հասարակական-քաղաքական գործիչ Նահապետ Ռուսիյանը: (Ծնվ. 1819թ.-ին):

**դեկտեմբեր 1** Թուրքական կառավարության ցուցումներով հրդեհվեց Վանի շուկան, զգալի նյութական վնաս հասցվեց տեղի բնակչությանը:

**դեկտեմբեր 11** Թուրքիայում հրապարակվեց սահմանադրություն, որը մեծ վեճի Միդհատի անունով կոչվեց Միդհատյան:

**1877 փետրվար 6** Ախալքալաքում ծնվեց հայ գրող Դերենիկ Դեմիրճյանը: (Վախճ. 1956թ.-ին):

**ապրիլ 12** Ալեքսանդր II-ը ստորագրեց Թուրքիային պատերազմ հայտարարելու մանիֆեստը:

**ապրիլ 18** Ռուսական զորքերի երևանյան ջոկատը գեներալ Տեր-Ղուկասովի ղեկավարությամբ, հայ աշխարհագրորայինների հետ միասին 12 օրվա ընթացքում գրավեց Բայազետ քաղաքը

**մայիս 5** Ռուսական զորքերը զորավար Լոռիս-Մելիքովի հրամանատարությամբ գրավեցին Արդահանը:

**մայիս 17** Ռուսական զորքերը Լոռիս-Մելիքովի հրամանատարությամբ նահանջեցին Արդահանից:

**մայիս 28** Ռուսական զորքերը մտան

Ալաշկերտ:

**սեպտեմբեր 5** Ցարական առավարությունը լրացուցիչ կանոնադրություն է հաստատում Երևանի նահանգի և Թիֆլիսի նահանգի Ախալցխայի գավառի պետական գյուղացիների մասին: (Կանոններ «բարձր դասին» չպատկանող հողատերերի և նրանց հողերի վրա ապրող գյուղացիների մասին):

**հոկտեմբեր 3** Ռուսական զորքերը գեներալ Լազարևի գլխավորությամբ Ալաշայի բարձունքներում Կարսի մոտ ջախջախում են Մուխտար փաշայի թուրքական բանակը:

**նոյեմբեր 1** Կազմակերպվում է Կարսի մարզը, որը հետագայում բաժանվում է չորս օկրուգների՝ Կարսի, Արդահանի, Կաղզվանի և Օլթիի:

**նոյեմբեր 6** Ռուսական զորքը գեներալ Հովհաննես Լազարևի հրամանատարությամբ գրավում է Կարսը:

**նոյեմբեր 8** Թիֆլիսում բացվեց Մարիամյան-Հովնանյան օրիորդաց դպրոցը:

**1878 հունվար 1** Կ. Պոլսում «Դպրոցասիրաց» և «Արևելյան» ընկերությունները միանում են և կազմում «Դպրոցասիրաց-Արևելյան» ընկերությունը:

**հունվար 19** Ադրիանապոլսում զինադադար կնքվեց Ռուսաստանի և Թուրքիայի միջև:

**փետրվար 8** Ռուսական զորքերը գրավեցին Կարինը (Երզրում):

**փետրվար 19** Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրվեց Սան Ստեֆանոյի պայմանագիրը:

**մարտ 5** Ծնվեց օպերային երգչուհի, մենակատար Ջարուհի Դուլիսանյանը: (Վախճ. 1936թ.):

**մարտ 8** Հայկական պատվիրակությունը Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ Կ. Պոլսից մեկնեց Բեռլին հայկական հարցը Բեռլինի կոնգրեսին ներկայացնելու համար:

**մարտ 13** Սան Ստեֆանոյի համաձայնագիրը երաշխավորում էր հայերի անվտանգությունը, բայց միայն թղթի վրա:

**մարտ 16** Ծնվեց քաղաքապետ, ակադ. Ալեքսանդր Թամանյանը: (Վախճ. 1936թ.-ին):

**մայիս 23** Կնքվեց անգլո-թուրքական համաձայնագիրը, որով Անգլիան Թուրքիայից գրավեց Կիպրոս կղզին:

**հունիս 1** Բացվեց Բեռլինի կոնգրեսը, որի աշխատանքները շարունակվեցին մինչև հուլիսի 1-ը:

**հուլիս 1** Բեռլինի դաշնագրի կնքումը:

**հուլիս 13** Ավարտվեց Բեռլինի կոնգրեսը:

**օգոստոս 13** Սկսվեց Ջեթունի ապստամբությունը:

**օգոստոս 15** Ծնվեց հայ նշանավոր բանաստեղծ Սիամանթոն: 1915թ. հայերի ցեղասպանության նախօրեին թուրքերը նրան կտտանքների ենթարկելով սպանեցին:

**սեպտեմբեր 7** Բեռլինի պայմանագրի համաձայն Կարինը (Երզրում) վերադարձվում է Թուրքիային:

**հոկտեմբեր 1** Ծնվեց հայ ականավոր մարքսիստ, հեղափոխական Ստեփան Շահումյանը: (Վախճ. 1918թ.-ին):

**նոյեմբեր 14** Ծնվեց ականավոր բուլշևիկ, պրոֆեսիոնալ հեղափոխական Բոգդան Կոնյանցը: (Վախճ. 1911թ.-ին):

(Շարունակելի)

# Լուրեր



## Իրանահայ համայնք

Իրանահայ բեմադրիչ, Լույս երկշաբաթաթերթի խմբագրության անդամ՝ Անդրանիկ Խեչումեանը պարգևատրվել է Հայաստանի քատերական գործիչների միության մեդալով



2004 թվականի սեպտեմբերի 20-ին, Հայաստանի Թատերական գործիչների միության նախագահության որոշմամբ, իրանահայ բեմադրիչ, տարգմանիչ եւ Ապագա անսագրի եւ Լույս երկշաբաթաթերթի խմբագրու-թյան անդամ՝ Անդրանիկ Խեչումեանը պարգևատրվեց Հայաստանի Թատերական գործիչների միության «Արտավազդ» մեդալով: Ըստ Հայաստանի Թատերական գործիչների միության նախագահության՝ նա սույն մեդալը ստացել է «Իրանի Իսլամական Հանրապետությունում հայ մշակույթի լայն տարածման, արտերկրի եւ մայր հայրենիքի միջեւ ստեղծագործական կապերի ամրապնդման համար»:

Այս առիթով Լույս-ի խմբագրությունը շնորհավորում է սիրելի Անդրանիկին:



## Իրան

### ԹԱՎՐԻՉՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԱԴՐԲԵՉԱՆԻ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Իրանի Թավրիզ քաղաքում բացվել է Ադրբեջանի գլխավոր հյուպատոսությունը: Բաքվի «Ձերկալոն» գրում է, որ, ըստ 1992 թ. երկկողմ համաձայնագրի, Ադրբեջանը պետք է հյուպատոսություն ունենար Թավրիզում, իսկ Իրանը՝ Նախիջևանում: Եթե Նախիջևանում Իրանի հյուպատոսությունը գործում է տարիներ, ապա Թավրիզում հյուպատոսություն բացելու հարցը ձգձգվում էր քաղաքական նկատառումներով: Թեհրանի իշխանությունները մտահոգություն ունեին, որ ազերիներով բնակեցված Թավրիզում հյուպատոսության բացումը կարող է անջատողականության մղել Իրանի ադրբեջանցիներին: Ժամանակին Ադրբեջանի նախկին նախագահներից Աբուլֆազ Էլչիբեյը Թավրիզը համարում էր միացյալ Ադրբեջանի մայրաքաղաք:

# Հայաստան

## ՀԱՅ ԳՐՈՍՄԱՅՍՏԵՐՆԵՐԻՑ ՎԵՅԸ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻ ԹՎՈՒՄ ԵՆ



ՖԻԴԵ-ն հրապարակել է աշխարհի ուժեղագույն շախմատիստների հերթական դասակարգման ցուցակը հոկտեմբերի 1-ի դրությամբ: Ինչպես եւ նախորդ ցուցակներում, այս անգամ էլ այն վստահորեն գլխավորում է աշխարհի 13-րդ չեմպիոն Գարի Կասպարովը: Ճիշտ է, նախորդ ցուցակի համեմատ նա իր վարկանիշը 4 կետով նվազեցրել է: Չնայած դրան, Կասպարովը երկրորդ տեղում ընթացող հնդիկ գրոսմայստեր Վիշվանաթան Անանդին գերազանցում է 42 միավորով: Հուլիս ամսվա համեմատ ցուցակում ամենամեծ առաջընթացն ունեցել է լեհ գրոսմայստեր Սիխալ Կրասենկովը, որն իր վարկանիշն ավելացրել է 46 կետով: Դրա շնորհիվ նա 63-րդ տեղից տեղափոխվել է 27-րդ հորիզոնական: Իսկ ահա ռուսաստանցի Սերգեյ Ռուբլյովսկին իր վարկանիշը նվազեցրել է 37 կետով՝ 19-րդ հորիզոնականից նահանջելով 50-րդ տեղը:

100 ուժեղագույն շախմատիստների թվում տեղ են զբաղեցրել 6 հայ գրոսմայստերներ, որոնցից 5-ը ներկայացնում են Հայաստանը: Հայ շախմատիստներից ամենաբարձր ցուցանիշն ունի Վլադիմիր Հակոբյանը (2692): Նա պահպանել է իր ցուցանիշը, սակայն 2 հորիզոնականով նահանջել է եւ այժմ զբաղեցնում է 19-րդ տեղը: Հաջորդը Լեւոն Արոնյանն է: Նա հայ շախմատիստներից միակն է, որ իր վարկանիշը հուլիսի դրությամբ բարձրացրել է 4 կետով (2675): Լեւոնը 32-րդ հորիզոնականից տեղափոխվել է 29-րդ տեղը: Մեր ամենափորձառու շախմատիստներից մեկը՝ Ռաֆայել Վահանյանը 2640 գործակցով ընթանում է 58-րդ տեղում: Ռաֆայելն իր գործակցից նվազեցրել է 2 կետով՝ նահանջելով 5 հորիզոնականով: Անսասան են մնացել Սմբատ Լալուտյանի դիրքերը: Սմբատը վերջին տարիներին հազվադեպ է մասնակցում մրցաշարերին, ռուսի հնարավորություն չունի բարձրացնելու իր վարկանիշը: Հուլիս ամսվա համեմատ անփոփոխ է մնացել թե՛ նրա վարկանիշը (2634), թե՛ զբաղեցրած տեղը (60-րդ): Սլովակիան ներկայացնող Սերգեյ Մովսիսյանը բավական նահանջել է ցուցակում: Նա իր վարկանիշը նվազեցրել է 17 կետով՝ 50-րդ տեղից

տեղափոխվելով 71-րդ հորիզոնական: Ցուցակում ամենացածր տեղը զբաղեցնում է Գաբրիել Սարգսյանը (102): Նա եւս իր վարկանիշը նվազեցրել է 6 կետով, որի հետեւանքով 88-րդ տեղից նահանջել է եւ դուրս մնացել 100 լավագույնների ցուցակից:

Կանանց դասակարգման ցուցակը նախկինի պես գլխավորում է հունգարուհի գրոսմայստեր Հուդիթ Պոլգարը: Չնայած նա երեխայի ծննդյան կապակցությամբ բավական ժամանակ մրցաշարերի չի մասնակցում, սակայն նրա առավելությունը մրցակցուհիների նկատմամբ այնքան մեծ է, որ այդ ընթացքում նրանցից եւ ոչ մեկին չհաջողվեց շրջանցել Պոլգարին: 50 լավագույն շախմատիստուհիների թվում Հայաստանը ներկայացնում է միայն Էլինա Դանիելյանը: Նա 2437 վարկանիշով 31-րդ տեղում է: Մինչեւ 20 տարեկան շախմատիստների դասակարգման ցուցակը գլխավորում է ադրբեջանցի գրոսմայստեր Թեյմուր Ռաջաբովը (2663): Նրա հայրենակից Շահրիար Մամեդյարովն առաջատարին զիջում է 3 միավորով: Աղջիկների դասակարգման ցուցակի առաջատարը ռուսաստանցի 20-ամյա շախմատիստուհի Ալեքսանդրա Կոստենյուկն է (2508): 2500-ի սահմանագիծը հաջողվել է հատել նաեւ հնդիկ շախմատիստուհի Հունայի Կոներուին (2503):

Հետաքրքրական է, որ Հայաստանի շախմատիստներն իրենց միջին վարկանիշով աշխարհում 7-րդն են (2607): Տարբեր երկրների վարկանիշը հաշվելիս հաշվի է առնվում տվյալ երկրի 10 լավագույն շախմատիստների միջին վարկանիշը: Բնականաբար, ամենաբարձր ցուցանիշն ունեն Ռուսաստանի շախմատիստները (2720): Երկրորդ տեղում ուկրաինացիներն են (2632), որոնց հաջորդում են հունգարացիները (2624), ֆրանսիացիները (2616), ամերիկացիները (2610), իսրայելցիները (2609), անգլիացիները (2607), գերմանացիները (2602): Լավագույն տասնյակը եզրափակում են հուլանդացիները (2589):

Ներկայացնում ենք ՖԻԴԵ-ի դասակարգման ցուցակի 10 լավագույն շախմատիստների ցուցանիշները.

Տղամարդիկ

1. Գարի Կասպարով	Ռուսաստան	2813
2. Վիշվանաթան Անանդ	Հնդկաստան	2781
3. Վլադիմիր Կրամնիկ	Ռուսաստան	2760
4. Ալեքսանդր Մորոզեւիչ	Ռուսաստան	2758
5. Վեսելին Թոփալով	Բուլղարիա	2757
6. Պետեր Լեկո	Հունգարիա	2743
7. Մայքլ Ադամս	Անգլիա	2740
8. Պյոտր Սվիդլեր	Ռուսաստան	2735
9. Հուդիթ Պոլգար	Հունգարիա	2728
10. Ալեքսեյ Շիրով	Իսպանիա	2726

Կանայք

1. Հուդիթ Պոլգար	Հունգարիա	2728
2. Խիե ժյուն	Չինաստան	2569
3. Անտոանետա Ստեֆանովա	Բուլղարիա	2523
4. Ալեքսանդրա Կոստենյուկ	Ռուսաստան	2508

5. Մայա Չիբուրդանիծե	Վրաստան	2503
6. Յունպի Կոներու	Հնդկաստան	2503
7. Չյու Չեն	Չինաստան	2494
8. Տառյանա Կոսինցեա	Ռուսաստան	2493
9. Խու Յուխուա	Չինաստան	2487
10. Ցիան Խուե	Չինաստան	2487

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՇՆՈՐՀՎԵՑ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐԻ ԿՈՉՈՒՄ



Հանդիպում Երեւանի պետական համալսարանում

Նոյեմբերի 18-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսն այցելեց Երեւանի պետական համալսարան, ուր հանդիպում ունեցավ համալսարանի դասախոսական կազմի եւ ուսանողության հետ:

Նորին Սրբությանը նախ ողջունեց ԵՊՀ ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը եւ շնորհավորելով գահակալության 5-րդ տարեդարձի առիթով՝ արելաշատություն եւ բեղուն գործունեություն մաղթեց Վեհափառ հայրապետին: ԵՊՀ ռեկտորը հույս հայտնեց, որ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի եւ պետական համալսարանի միջեւ գոյություն ունեցող 85-ամյա համագործակցությունը պիտի շարունակվի նաեւ այսօր:

Ի գնահատություն Ամենայն հայոց կաթողիկոսի ազգօգուտ գործունեության եւ կրթության ու գիտական մտքի զարգացման հանդեպ դրսեւորած հոգածության՝ ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ Գարեգին Բ հայրապետին շնորհվեց պատվավոր դոկտորի կոչում:

Դասախոսական կազմի անունից շնորհավորական խոսքերով հանդես եկան պրոֆ. Պետրոս Յովհաննիսյանը, պրոֆ. Ռաֆիկ Վարդանյանը եւ պրոֆ. Սամվել Մուրադյանը՝ մեծապես կարելորելով հայ դպրոցի, հայ բուհի կապն ու միասնությունը Հայաստանյայց առաքելական եկեղեցու հետ, որի հովանու ներքո գործել են դարեր շարունակ:

Հանդիպմանը ներկա համալսարանականներին իր օրհնության խոսքն ու պատգամը հղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը: Նորին սրբությունը իր ուրախությունը հայտնեց Երեւանի պետական համալսարանում գտնվելու եւ բարձր պարգևի շնորհման համար: Վեհափառ հայրապետն իր

գնահատանքը հայտնեց դասախոսներին իրենց նվիրյալ ծառայության համար, որ իրականացնում են հայորդիների կրթման ու դաստիարակման սրբազան գործում:

Հայոց Հայրապետն անդրադարձավ Հայ եկեղեցու ներկայիս առաքելությանը, իրականացվող գործունեությանը, եկեղեցու առջեւ ծառայած խնդիրներին ու մարտահրավերներին, երիտասարդների մասնակցությանը եկեղեցական կյանքին:

Այնուհետեւ Նորին սրբությունը պատասխանեց ուսանողների եւ դասախոսների հարցերին:

Վեհափառ հայրապետին ուղեկցում էին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Մայր աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը եւ Մայր աթոռի միաբաններ:

### ԸՍՏ ԱՄՆ ՏԱՐԵԿԱՆ ՉԵԿՈՒՅՑԻ

#### ԿՐՈՆԱԿԱՆ

#### ՓՈԲՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ

#### ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱԶՄՈՒՄ Է

#### ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄՈՏ 10 ՏՈԿՈՍԸ

#### Կառավարությունը գրանցել է կրոնական

#### 55 կազմակերպության

ԱՄՆ պետքարտուղարությունը հրապարակել է 2004 թ. Հայաստանում կրոնական ազատության զեկույցը, որտեղ նշվում է, որ կառավարությունը հերթական անգամ մերժել է «Եհովայի վկաներին» գրանցել որպես կրոնական կազմակերպության: Ի տարբերություն նախորդ մերժումների, այս անգամ կառավարության ազգային փոքրամասնությունների եւ կրոնական հարցերի գրասենյակը նշել է տեխնիկական թերություններ, ինչը կարող է նշանակել, որ մոտ ապագայում եհովականների իրականացրած մարդորսությունն այլևս անօրինական չի համարվի:

Չնայած կառավարությունը չի տրամադրել կրոնական փոքրամասնությունների ընդհանուր թվի մասին տվյալներ, ԱՄՆ պետքարտուղարության զեկույցում բերվում են հետևյալ թվերը.

կաթոլիկներ	180 հազար
եզդիներ	30-40 հազար
հիսունականներ	25 հազար
Եհովայի վկաներ	7500
բողոքականներ	5000
խարիզմատներ	3000
բապտիստներ	2000
մորմոններ	2000
հրեաներ	500-1000
ադվենտիստներ	1000

Այստեղ ակնհայտորեն փոքրացված է եհովականների թիվը: Դեռ 2002 թ., ըստ «Համագործակցություն համուն ժողովրդավարության» ԴԿ-ի տվյալների,

եհովականների թիվը կազմել է 28 հազար, այսինքն Հայաստանի բնակչության մեկ տոկոսը «վկա» է: Պետքարտուղարության զեկույցում նշվում է, որ եհովականները դժվարություններ չեն ունեցել հանդիպումներ-հավաքների համար տեղ վարձելու հարցում, ինչը արձանագրվել էր նախորդ տարիներին: Եթե նախորդ տարիներին սահմանային անցակետերում առգրավվել է «վկաների» գրականությունը, ապա այժմ նրանց թույլ է տրվում «իրենց անձնական օգտագործման համար բերել փոքր քանակությամբ տպագիր նյութեր»:

Հայաստանյան որոշ հասարակական կազմակերպություններ պնդում են, թե բազմաթիվ աղանդավորներ, այդ թվում՝ եհովականներ, ազատվել են աշխատանքից կամ ենթարկվել հարձակման իրենց հավատի պատճառով: Մինչդեռ պետքարտուղարության զեկույցում «եհովայի վկաների» մի ամանուն ներկայացուցիչ ասել է, որ տեղյակ չէ նման դեպքերի:

Ըստ զեկույցի, «եհովայի վկաները» շարունակում են «իրենց միսիոներական աշխատանքը», եւ նրանց համախոհների թիվն ավելանում է: «Ավետարանչականները եւ մորմոնները հովանավորում են միսիոներական ծրագրերը», ասվում է զեկույցում:

## Արցախ

### ԼՂՀ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ՝ 146592 ՄԱՐԴ

ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակել է հանրապետության ժողովրդագրական իրավիճակի տվյալներն անցած 9 ամսվա կտրվածքով: Համաձայն այդ տվյալների, ԼՂՀ բնակչության թվաքանակը հոկտեմբերի 1-ի դրությամբ 146.592 մարդ է: Աճը տարեսկզբի համեմատ կազմել է 1.100 մարդ:

Հանրապետությունում ծնվածների թիվը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 0.9 տոկոսով՝ 1619 երեխա: Աճել է նաեւ մահացածների թիվը՝ 10.3 տոկոս կամ 1004 մարդ: Ծնունդների թվաճն հիմնականում առկա է եղել շրջաններում՝ նվազագույնը 2.5 եւ առավելագույնը՝ 28.4 տոկոսի տատանողականությամբ:

2004 թ. հունվար-սեպտեմբերին ԼՂՀ եկողների թվաքանակը 806 է, իսկ հանրապետությունից մեկնողների թիվը՝ 303 մարդ: Մեխանիկական հավելաճը նախորդ տարվա համեմատ 69.4 տոկոսով կամ 503 մարդով աճել է:

Ամուսնությունները համեմատական ցուցանիշներով նվազել են 6.2 տոկոսով, իսկ ամուսնությունների թիվն աճել է 12.6 տոկոսով: Նոր կազմավորված 100 ամուսնական զույգերի

հաշվարկով արձանագրվել է 11 ամուսնալուծություն: Ամուսնական զույգերի միջին տարիքը 24.4 տարեկանն է:

## Հասարակական

### ՅԱՍԵՐ ԱՐԱՖԱԹ. «ՊԱՅԲԱՐՈՒՄ ԵՆՔ, ՈՐՊԵՍՉԻ ԱՇԽԱՐՀԸ, ԻՆՉՊԵՍ ՀԱՅԵՐԻՆ, ՄԵՉ ՉՄՈՒԱՆԱ»

*Պաղեստինյան հեղափոխության լեգենդար ղեկավարի եւ հայ նորագույն ազգային-ազատագրական պայքարի նախածնողներից մեկի ողբականը*

1965թ.-ին, երբ հայ ժողովուրդը ինչպես սփյուռքում, այնպես էլ մայր հայրենիքում ոգեկոչում էր ցեղասպանության 50-ամյակը, Եգիպտոսում եւ Յորդանանում ծնունդ առավ Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը (ՖԱԹՅ), որի ղեկավարը մինչեւ իր մահը մնաց Պաղեստինի ամենահեղինակավոր ընտանիքներից մեկի՝ Յուսեյնիների զավակ Յասեր Արաֆաթը: Նա փաստորեն շարունակեց պաղեստինցի ազգային հերոս Աբդ Ալ-Գադեր Յուսեյնիի շարժումը, որ կանգ էր առել 1948 թ.-ին, զինվորական ղեկավարի արաբ-խրայեյան առաջին պատերազմում զոհվելուց հետո:

Յասեր Արաֆաթը շատ լավ ծանոթ էր հայերին, որոնք դարեր շարունակ Պաղեստինում սրբատեղիներ ու վանքեր, ուխտավայրեր էին պահպանում, որոնցից ամենից նշանավորը Սուրբ Հակոբի վանքն է Երուսաղեմում՝ Սիոն լեռան վրա: 1946-1948թթ. պատերազմի ամենից շատ տուժողներից մեկը նաեւ հայերն էին, որոնցից շատերը լքելով Հայֆան, Յաֆան, Երուսաղեմը՝ արտագաղթեցին Լիբանան, Սիրիա եւ Հայաստան, մի մասն էլ, հետագա տարիներին, մանավանդ 1967թ.-ի արաբ-խրայեյան պատերազմից հետո՝ Կանադա եւ ԱՄՆ: Հիշեցնենք նաեւ, որ պաղեստինյան մյուս հեղափոխական կազմակերպությունների ղեկավարներից շատերը, ինչպես ժողովրդային եւ դեմոկրատական ազատագրական ճակատի նախագահներ Ջորջ Հաբաշն ու Նայեֆ Հավաթմեն, Հույն-օրթոտոքս համայնքից էին եւ որոնց նախահայրերը 400 տարի կողք-կողքի ապրել էին Պաղեստինի մահմեդական համայնքի եւ հույն ուղղափառ, հրեա եւ հայ ազգաբնակչության հետ:

Ահա եւ այսպիսի իրավիճակում, 1947-1948 եւ 1967 թթ.-ի արաբ-խրայեյան պատերազմներում կրած պարտություններից հետո, որոնց մեջ մեծ դեր էին խաղացել արեւմտյան տերությունները եւ արաբ զանազան պետություններ, տարբեր դավանանքների պատկանող միլիոնավոր պաղեստինցիներ հայտնվեցին անտուն գաղթականների իրավիճակում, զլխավորաբար Լիբանանում, Պաղեստինում եւ Սիրիայում: Վերհիշելով 1915 թ.-ի Հայոց

ցեղասպանությունից եւ 1937-38 թթ.-ի Սանջազ-Ալեքսանդրեթի ողբերգությունից հարյուր հազարավոր գաղթական հայերի իրավիճակը, 1968 թ.-ին Յասեր Արաֆաթը միջազգային զանգվածային լրատվության միջոցների այն հարցին, թե ինչն է զինյալ պայքարի ուղին են նախընտրել, պատասխանեց. «Պայքարում ենք, որպեսզի աշխարհը, ինչպես հայերին, մեզ եւս չմոռանա»:

Իսկապես էլ, սփյուռքահայ ազգային ազատագրական նորագույն պայքարի օրրան Բեյրութից, հայ երիտասարդներ Պետրոս Թերզյանը եւ Հակոբ Գարայանը, որպես «երիտասարդ հայ» ամսագրի խմբագրակազմի անդամներ 1968թ.-ին այցելեցին պաղեստինյան հեղափոխության կենտրոնները Հորդանանում, ուր հանդիպեցին Յասեր Արաֆաթի, Ջորջ Յաբաշի, Նայեֆ Հավաթմեի, Աբու Ալի Իյյադի եւ ուրիշ ղեկավարների հետ: Հետագայում այդ պատմական առաքելությանը նվիրված հատուկ որմազդներ տպագրվեցին եւ փակցվեցին Բեյրութի փողոցներում: Դրանցում պատկերված էին հայ եւ պաղեստինցի ֆիդայիներ՝ «Վերքերով լի ջան ֆիդայի» վերտառությամբ:

Մի տարի հետո, 1969թ.-ին, երբ Հորդանանում Հյուսեյն թագավորի զորքերը եւ իսրայելյան բանակի միավորները հարձակվեցին պաղեստինյան գաղթականների վրա, սպանվեց Արաֆաթի հիմնական ռազմական գործակից Աբու Ալի Իյյադը: Նույն օրերին, պաղեստինցիները կորցրեցին իրենց եւ արաբ ժողովրդի ազգայնական շարժման ռահվիրա, Եգիպտոսի նախագահ Կամալ Աբդ էլ Նասերին, որն հանկարծամահ եղավ Կահիրեում:

Ամերիկյան ռազմական հետախուզությունը, թիկունքից հարվածելու համար Հորդանան գրահատանկային ուժեր ուղարկած սիրիական օգնությունը, կազմակերպեց 1970թ.-ի Հաֆեզ Ալ-Ասադի ռազմական հեղաշրջումը Դամասկոսում, որի պատճառով Արաֆաթն ու իր զինակիցները ծանր պարտություն կրեցին Հորդանանում եւ Կահիրեի համաձայնագրով մեծ մասամբ անցան Լիբանանի հարավային շրջանները, Սիրիա, Իրաք, որտեղ արդեն նոր մութ ամպեր էին կուտակվում: Լիբանանում նրանց ներկայությունը աղետ եղավ այդ երկրի համար: Բեյրութում, Լիբանանի Առաջադիմական ճակատին ունենալով որպես գլխավոր դաշնակից, որը գլխավորում էր Լիբանանի առաջադիմական-սոցիալիստական կուսակցության նախագահ Կամալ Ջոնբլաթը, Յասեր Արաֆաթը բնական դաշնակիցներ գտավ նաեւ հայերի մեջ, որոնց հայրերը որպես իրենց տուն ու տեղից երիցս քշված գաղթականներ՝ բնակություն էին հաստատել Լիբանանում: Այնպես որ, 1973թ.-ի արաբ-իսրայելյան պատերազմից եւ Լիբանանի քաղաքացիական պատերազմի պայթելուց հետո ՖԱԹՀ-ի ղեկավարի եւ զինակիցներ անմիջական օգնությամբ հիմնադրվեցին Հայաստանի Ազատագրության Հայ գաղտնի բանակը (ASALA), Արեւմտյան Հայաստանի Ազատագրության ճակատը, որոնց դաշնակիցները դարձան 1980թ.-ին Թուրքիա եւ Սիրիա ապաստանած քուրդ, արաբ, հույն, ասորի, թուրք ձախակողմյան շարժումներից շատերը՝ (PKK,

TAKP, Isinin Sesi, TKP-Leningiler, Devrimi Yol) եւ այլ կազմակերպություններ, որոնք Քենան Էվրենյան խունտայի դեմ քաղաքական, ռազմական, քարոզչական մեծ աշխատանք կատարեցին Լիբանանում, Թուրքիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Բելգիայում, Գերմանիայում եւ այլուր: Այդ աշխատանքներից շատերը, մասնավորապես գրականությամբ, ֆիլմերով, մամուլով, բացահայտեցին թուրքական «դեմոկրատիայի» իսկական դեմքը, որը հայերի, քրդերի, հույների, ասորիների դեմ ցեղասպանություններ գործադրելուց հետո՝ զանգվածային տանջանքների, կախաղանների էր «արժանացրել» նաեւ թուրք առաջադեմ մտավորականությանը: Հիշեցնենք, որ առանց Յասեր Արաֆաթի, Աբու Ջիհադի, Աբու Այադի, Աբու Շաքեր Բսիսոյի, Աբու Ալ-Հուլի, Հավաթմեի (ՖԱԹՀ), Ջորջ Յաբաշի (ՊԱԺԵ), Նայեֆ Հավաթմեի (ՊԱԴԵ), Աբու-Ալ Աբբասի (ՊԱԵ), Դալադ Յագուբի (ՊԱԵ) եւ այլոց ռազմական, նյութական, բարոյական օժանդակության անկարելի էր հայ ժողովրդի եւ թուրքիայի տառապյալ ժողովուրդների արդար դատերը վերստին համաշխարհային պահանջատիրության սեղանին վերադարձնել: Վերոհիշյալ ղեկավարներից շատերը որպես «պատիժ» իրենց հավիտենական հանգիստը գտան դաժան նահատակության ճանապարհին: Անկարելի է մոռանալ՝ որ 1978թ.-ին «Միթ»-ի եւ «Մոսադ»-ի զրգռությամբ Բեյրութի հայկական թաղամասերի վրա հարձակում կազմակերպած Լիբանանի ֆալանգիստական զինված ուժերին դիմակայելու գործում հայերը նեցուկ ստացան Յասեր Արաֆաթի հրետանային միջամտությունից:

Տասնամյակներ շարունակ զինյալ պայքարից քաղաքական պայքարի անցած պաղեստինյան ինքնավարության նախագահ Յասեր Արաֆաթին առանձնացնելու, հեղինակագրկելու փորձերը ԱՄՆ-ի ու Իսրայելի կողմից՝ հանգեցրին իսլամական ծայրահեղականության զարգացմանը, որը երեկի ձախակողմյան-մարքսիստական գաղափարախոսությունից անցել է միջնադարյան հետադիմականությանը՝ հանձին «փրկիչ» Բեն Լադենի: Այդ ահաբեկիչներն այժմ գոյատևում են նույնպիսի արյան բաղնիքներ սարքելով, ինչպես իրենց հակառակորդները:

Կյանքի անթիվ-անհամար փորձություններ ապրած, անհաշիվ մահափորձերից վերապրած, բազմիցս մեկուսացված, բայց զարմանալիորեն այդ բոլորը վերապրած Յասեր Արաֆաթի 75-ամյա կյանքի թելը կտրվեց նախորդ օրը: Հունաղավան բրիտանացի տիկնոջից ունեցած միակ դստերը որպես ժառանգ թողած Պաղեստինի բյուրավոր որբերի հայր նկատված Արաֆաթը իր կյանքի մայրամուտով անորոշության մեջ է թողնում Մերձավոր Արեւելքի չլուծված հարցերը: Ինչպես ինքն էր ասել ժամանակին՝ «Պաղեստինցու համար մեծ հարց է ո՞ր ծնվելը, բայց ավելի ծանր հարց է ո՞ր թաղվելը»:

*ՀԱՄԱ ՄԱՍԿՈՖՅԱՆ*  
ԱԶԳ

# ԵԳԻՊՏԱՀԱՅՈՑ «ԵՐԿՈՒ ՈՍԿԵՂԱՐԵՐԻ» ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

19-րդ դարում եւ 20-րդի սկզբին յուրահատուկ բարգավաճում է ապրել Եգիպտոսի հայկական դարավոր գաղթօջախը: Այստեղ են ապրել ու ստեղծագործել հայ գրականության, մշակույթի, գործարարության բազմաթիվ երեւելիներ, այստեղ են հիմնվել մի քանի համահայկական կազմակերպություններ, ինչպես Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, Համազգային կրթական ու մշակութային միությունը եւ այլն: Հակառակ մեր հայրենադարձության եւ վերջին 20-ամյակում Եգիպտոսի վայրիվերումներին, երկրի հայկական գաղթօջախն այսօր էլ կենսունակ է:

Գաղթօջախի պատմության մասին բազմաթիվ գրքեր են լույս տեսել: Այսուհանդերձ, Սոնա Ձեյթյանի՝ վերջերս լույս տեսած «Հայութեան ներդրումը վաղ միջնադարեան եւ արդի Եգիպտոսի պատմութեան մէջ» ուսումնասիրությունը նոր խոսք է այս մասին: Մեծադիր 192 էջ ծավալով գրքի հրատարակիչն է Մոնրեալի Եգիպտահայերի միությունը: Հեղինակը գիրքը նվիրել է իր թոռանը՝ Գայլ Սարգիս Ձեյթյանին:

Հեղինակը երբեմնի Եգիպտահայ ու լիբանանահայ է, ներկայումս՝ կանադահայ: Երկար տասնամյակներ ծառայել է հայ դպրոցին: Նրա գրչին են պատկանում «Հայ կնոջ դերը հայ հեղափոխական շարժման մէջ» (1968, հրատարակվել է 1992 թ.), «Մուսա լեռան ժողովրդական հեքիաթներ» (1979) գրքերն ու «Արի արանց» քառագիրք մատենաշարը:

Ներկայացվող հատորն սկսվում է բովանդակության ցանկով: Հաջորդում է հեղինակի «Մեկնակետ» ներածականը, որտեղ նա հիմնավորում է գրքի հեղինակման անհրաժեշտությունը եւ տալիս նրա աղբյուրագիտության համառոտ տեսությունը: Այնուհետեւ Ա. Քեռչկերյանի (հավանաբար՝ հրատարակիչ միության ղեկավարն է) «Ներածականն» է, ապա հեղինակի՝ «Մուտքը»:

Կառուցվածքային առումով հատորը բաժանված է երկու մասի, յուրաքանչյուրը՝ վեցական գլուխներով: Ավարտին բերված են օգտագործված աղբյուրների ցանկերն ըստ երկու մասերի, ապա՝ հիշատակված անձնանունների ցանկը, հեղինակի համառոտ կենսագրությունը:

Առաջին մասը (էջ 19-59), հեղինակի բնորոշմամբ, նվիրված է Եգիպտահայ «երկու ոսկեդարերից» առաջինին՝ 11-12-րդ դարերին, թեւ հեղինակն առանձին գլուխներով անդրադարձել է նաեւ նախորդ եւ հաջորդ դարերին: Հատկապես շեշտը դրվել է Ֆաթիմյան Եգիպտոսի հայազգի գորավարների եւ վեզիրների գործունեության վրա:

Պատմագիտության տեսակետից ավելի արժեքավոր է գրքի երկրորդ մասը (էջ 61-176)

նվիրված «երկրորդ ոսկեդարին»՝ 19-20-րդ դարերին: Այս մասում, հենվելով հայերեն, արաբերեն, անգլերեն եւ ֆրանսերեն աղբյուրագիտական չափազանց հարուստ բազայի վրա, Սոնա Ձեյթյանը համակողմանիորեն ներկայացնում եւ վերլուծում է հայության ներդրումն արդի Եգիպտոսի քաղաքատնտեսական, օրենսդրական, կրթական եւ կենսագործունեության բազմաթիվ այլ ոլորտներում: Առանձին բաժիններով ներկայացված են երկրի ու գաղթօջախի, նաեւ համայն հայության պատմության մեջ զգալի դերակատարություն ունեցած հինգ դեմքեր՝ Պողոս բէյ Յուսուֆյան, Նուբար եւ Պողոս Նուբար փաշաներ, Տիգրան փաշա դ'Ապրո եւ Յագուբ Արթին փաշա Չրաբյան: Ս. Ձեյթյանը գտնում է, որ թեւ «Եգիպտահայութիւնը իր թիւին համաձայն փոքրամասնութիւններուն վերջինն էր, սակայն պետական կեանքի մասնակցութեան, կազմակերպական ու տնտեսական հզօրանքին, ինչպէս նաեւ վայելած հեղինակութեան շնորհիւ փոքրամասնութիւններուն առաջինը կը դասուէր» (էջ 167): Նա է եղել երկրում տղաների եւ աղջիկների առաջին դպրոցի հիմնադիրը 1828-ին (էջ 151): Հեղինակը մեջբերում է հեղինակավոր «ալ Աիրամ» թերթի շաբաթական հավելվածի 2002 թ. մարտի 31-ի համարից այն խոստովանությունը, թե Եգիպտոսի առաջին լուսանկարիչները հայերն են եղել (էջ 161): Նման բազմաթիվ փաստերի ենք հանդիպում երկրորդ մասի գրեթե յուրաքանչյուր էջում: Հեղինակը հատկապես շեշտում է հայ եկեղեցու առանցքային դերը գաղթօջախում եւ հայկական տարբեր խմբավորումների համերաշխ գոյակցությունը եւ նույնիսկ համագործակցությունը, որոնք նպաստել են, որ Եգիպտահայ շատ դեմքեր (Պողոս Նուբար, Մելգոնյան եղբայրներ, Նշան Փալանճյան եւ այլն) իրենց բարեսիրական գործունեությունը տարածեն Եգիպտոսի սահմաններից դուրս: Հեղինակը հավաստում է, որ այդ ոգին շարունակվում է նաեւ այսօր եւ կոչ է անում մյուս գաղթօջախներին օրինակ վերցնել Եգիպտահայության այս ոգուց: Գրքի փաստական ամփոփումը եղող վերջին գլխում Ս. Ձեյթյանն, իմիջիայլոց, գրում է. «Երկու ոսկեդարերու հայազգի ղեկավարները կը հաւատային, թէ պետութեան հիմնաքարը արդարութիւնն էր» (էջ 170): Ավա՛ղ, հայոց պետության մերօրյա ղեկավարները շա՛տ հեռու են նման հավատքից...

Հատորում լույս են տեսել պատմական յոթ քարտեզ ու բազմաթիվ լուսանկարներ:

Հեղինակի ոճը պարզ է, հաղորդական, որով գիրքն ընթերցվում է հափշտակությամբ:

Գիրքը համարյա անթերի է: Տեղ են գտել աննշան ժամանակագրական սխալներ (օրինակ՝ ազգային պատվիրակությունը 1924 թ. դեռեւս Պողոս Նուբարի կողմից գլխավորած լինելը (էջ 125), 1916 թ. Սաուդյան Արաբիայի գոյությունը (էջ 162), Մկրտիչ Խրիմյանին 1878 թ. Ամենայն հայոց կաթողիկոս հայտարարելը (էջ 173) եւ այլն): Այս թերիները երբեք չեն նսեմացնում հեղինակի կատարած հսկայական եւ շնորհակալ աշխատանքը, որը կարելու աղբյուր է այսօր շուրջ վեց հազար հաշվվող գաղթօջախի (էջ 141), հայ-արաբական հարաբերությունների, հայկական դիվանագիտության, գործարարության, մշակույթի եւ

տարբեր ոլորտների պատմությունն ուսումնասիրողների համար:

Ավելացնենք, որ գրքի առանձին հատվածներից հակիրճ ամփոփումներ հեղինակը ներկայացրել էր «Եգիպտահայ վարժարաններու աշակերտներու համաշխարհային հաւաքին» (12-18 սեպտեմբեր 2003, Երեւան) եւ լույս տեսել այս առթիվ Երեւանում հրատարակված «Յուշամատեանում» (էջ 13-14, նոյնի անգլերենը՝ էջ 45-64):

ԳԵՎՈՐԳ ՅԱԶԸՆՅԱՆ  
ԱԶԳ

## Մշակութային

### ՆՈՎՐՈՒԶԻ ԾԱՂԻԿ

Արտակ Վարդանյան

Բանաստեղծությունների շարք

Եվիրվում է հայ-իրանական բարեկամությանը

#### Պարսկերեն

Գեղեցիկ ես, պարսից լեզու,  
Եվ հարազատ հայերենիս այնքան,  
Որքան բառերը մեր մայր ու մադար:

Գեղահունչ ես, ֆարսի՝ հնամյա,  
Եվ ցեղակից իմ մայրենուն այնքան,  
Որ ասես հայերեն են հնչում  
Քո բառերը կարմիր, կապույտ, նարնջագույն  
Դրոշիս գույները սրբազան:

Պարսից արքայաշունչ լեզու,  
Որ կրում ես ոսկեփողին դարերի  
Եվ նշխարները մեր հին հավատքի,  
Որ հմայիչ ես ինչպես աչքերը պարսկուհու  
Եվ հարազատ ինչպես լույս մեղեդին թառի,  
Էլ ուրիշ ո՞ւմ հետ ունի հայերենս  
Ընդհանուր մասունքներ այսքան շատ...

2000, սեպտեմբեր, Աղավնածոր

#### Պարսկական մեղեդի

Աշխարհն ունայն է, ունայն է ու սին՝  
Սանթուրի ծայնն է մեղմանուշ հոսում,  
Նրա լարերից խոսքերը խլում,  
Թառն է բարբառում  
Բայց կյանքն է քաղցր,  
Ոչ միայն դավով,  
Այլ & սիրով ու խինդով առլեցուն.  
Եվ նեյն է ողբում դափին համընթաց,  
Ասես քավում է մեղքերը անթիվ  
Արար-աշխարհի  
Եվ սփռում այնքան  
Հույս, հանդարտություն,  
Ծով համբերություն...

2000, սեպտեմբեր, Աղավնածոր

#### Երեւանի Կապույտ մզկիթում

Մի ժամանակ շինությունն այս  
Իշխանության խորհուրդ է նա & ունեցել  
Եվ եր & ի հարկի-անհարկի հիշեցրել,  
Որ մեր հողի վրա ապրում ենք  
Ընդամենը որպես հպատակ...

Եվ ահա՝ թե՛լ են դարերը,  
Եվ մզկիթը Կապույտ,  
Որ նորոգված վեր է հառնում կրկին  
Հայոց հողից,  
Դրացի երկրի  
Մշակույթը,  
Պատմությունն ու դավանանքը  
Երկուստեք հարգելու  
Մեր ազնիվ ձգտումների  
Թարգմանն է այսօր,  
Ինչպես Իրանում նորոգված  
Թաղեի մեր վանքը վեհաշուք...

2000,  
սեպտեմբեր, Աղավնածոր

#### Պարսկական երգ

Պարսկալեզու երգն այս հորդ անձր & գարնան,  
Որից բույր են առնում հակինթ ու լալազար,  
Այս մեղմանուշ երգը շողակաթ է լույսի,  
Որից վեր է հառնում ծաղիկը Նովրուզի...

Պարսկալեզու երգն այս հեզասահ է այնքան,  
Շիրազի պարտեզի եղնիկների նման  
Եվ խայտանքի պես է ցողաթաթախ վարդի՝  
Սիրահար սոխակի ծայնին ունկնդիր...

2001, մարտ

#### Սուրբ Ստեփանոսի ճանապարհին

Արաքսի աջ ափով  
Որդուար-Ջուղա խճուղու երկայնքով անցնելիս՝  
Հանդիպակաց ափին,  
Պղնձագույն-խորհրդավոր մի կիրճում  
Ջուղայի վիրավոր խաչքարերը տեսա՝  
Թեքված, շուռ տված...  
Ջարդած ու գետը նետած...  
Տեսա... & հին վերքս տնքաց կրկին,  
Գեղք տվեց Վիշապասար լեռան նման...  
Եվ այդ հուսահատ պահին՝  
Որպես բալասան անամոք իմ վերքին,  
Իրանյան ափում,  
Ծաղկանկար քարերի  
Խոշտանգված անտառի դիմաց,  
Անդրերդու մատուռը տեսա՝  
Խնամքով նորոգված մի բարեգութ ձեռքով:  
Տեսա, & դառնաղի արցունքներիս միջից  
Օրհնեցի Իրանը  
Եվ աղթեցի իմ դրացու & եղբոր համար...

2001, օգոստոս, Ջուլֆա